Քաղաքական մանիպուլյացիայի հոգեբանական ասպեկտները

Նաղդալյան Մ. Կ.
Սոցիալական հոգեբանության ամբիոնի մագիստրոս, ԵՊՀ
(Հայաստան, Երևան)
n.mher7@gmail.com

Վճռորոշ բառեր՝ մանիպուլյացիա, քաղաքական մանիպուլյացիա, հոգեբանական առանձնահատկություններ, զոհ, մանիպուիլատոր

Психологические аспекты политического манипулирования

Нагдалян М. К.
Магистр кафедры социальной психологии, ЕГУ (Армения, Ереван)
n.mher7@gmail.com

Аннотация: Статья посвящена изучению психологических аспектов «политических манипуляций». Манипуляция наблюдается здесь как с межличностных, так и с политических точек зрения. , Выявлены психологические причины политических манипуляций, что позволяет нам иметь лучшее представление и противостоять этому явлению.
Ключевые слова: манипуляция, политическая манипуляция, психологические особенности, жертва, манипулятор

Psychological aspects of political manipulation

Nagdalyan M. K.
Master of department of Social Psychology, YSU (Armenia, Yerevan)
n.mher7@gmail.com

Abstract: The article is devoted to the study of the psychological aspects of “political manipulation”. Manipulation is observed here both from interpersonal and political points of view. , The psychological causes of political manipulation have been identified, which allows us to have a better representation and oppose this phenomenon.
Keywords: manipulation, political manipulation, psychological characteristics, victim, manipulator

Մանիպուլյացիոն տեխնիկաներից հնարավոր է օգտվել անգիտակցաբար, և առօրյա կյանքում մեզնից շատերը անգիտակցաբար խաղում են մանիպուլյատորների կամ մանիպուլյացիայի զոհերի դերեր: Ցուլաձեն իր հետազոտություններում նշում է, որ կա մանիպուլյացիայի գիտակցված, կանխամտածված ձև, որն ինչ-որ մի անձի կամ խմբի կողմից ուղղված է շահույթ հետապնդող նպատակների հասնելուն [**5**]:

Միջանձնային մակարդակի մանիպուլյացիոն ձևերին մենք հաճախ ենք հանդիպում: Ե. Դոցենկոն առաջարկում է այդ գործողությունների նման սահմանում. «Մանիպուլյացիան հոգեբանական ազդեցության տեսակ է, որի ճշգրիտ իրագործումը բերում է այլ մարդու մոտ այնպիսի մտադրությունների թաքնված գրգռման, որոնք չեն համապատասխանում նրա՝ գոյություն ունեցող ներկայիս պահանջմունքներին» [**2**, էջ 59]:

Նման սահմանման մեջ արդեն դրված է մանիպուլյացիայի բացասական գնահատականը որպես այդպիսին, և այս վերաբերմունքը եվրոպական մշակույթի մեջ խորը ամրապնդված է:

Ի տարբերություն միջանձնային հարաբերությունների՝ քաղաքական մանիպուլյացիաները դիմազրկված են և ենթադրում են ազդեցություն մարդկային լայն զանգվածների վրա: Փոքրամասնության կամքը (երբեմն՝ նաև միայն մեկ անձի) թաքնված ձևով պարտադրվում է մեծամասնությանը [**4**]:

Վ. Ամելինի կարծիքով՝ քաղաքական մանիպուլյացիայի տեխնոլոգիան ենթադրում է հետևյալ կետերը.

- Գիտակցության մեջ օբյեկտիվ ինֆորմացիայի տեսքով ոչ տեսանելիի ներդրումը, որը, սակայն, ցանկալի է որոշակի խմբերի համար:
- Ներազդում հասարակական գիտակցության ցավոտ տեղերի վրա, որոնք

նրանց մոտ առաջացնում են վախ. տագնապ, ատելություն և այլն:

•Ինչ-որ մտահաղացումների իրագործում, որոնց հասնելը կոմունիկանտը կապում է իր դիրքորոշմանը հասարակական կարծիքի կողմից աջակցության հետ [**1**, էջ 61]:

Քաղաքական մանիպուլյացիայի օրինակ է Սադամ Հուսեյնի քաղաքական ռեժիմի կենսունակության ֆենոմենը: Քանի որ 90-ական թվականներին գրեթե բոլոր իրաքցիների խոսակցության հիմնական թեման իրենց երկրի վրա դրված էմբարգոն էր, ինչը համարվում էր բոլոր դժբախտությունների պատճառ, Հուսեյնի ռեժիմին հեշտությամբ հաջողվեց ստեղծել թշնամու կերպար ՝ ԱՄՆ-ի տեսքով:

Քաղաքական մանիպուլյացիայի վառ օրինակ է նաև Պոտսդամի համաժողովում Իոսիֆ Ստալինի վարքը, որը արտահայտում էր կատարյալ հանգստություն, այնինչ ԽՍՀՄ-ին սպառնում էր իրական վտանգ՝ ամերիկյան ատոմային ռումբի տեսքով: Մարդիկ Ստալինի շնորհիվ չկորցրին հավատը իրենց առաջնորդի և սեփական անվտանգության նկատմամբ: Ճիշտ է, այս ժամանակաշրջանում հեշտ էր խորհրդային ղեկավարության համար իրագործել նման հնարք, քանի որ չկային ինֆորմացիայի այլ աղբյուրներ: Սակայն հետագա փորձը ցույց տվեց, որ նման աղբյուրների առկայությունը խոչընդոտ չի հանդիսանում մանիպուլյատորի համար:

Մանիպուլյացիայի գործընթացում գլխավոր դերը մանիպուլյատորինն է, իսկ մանիպուլյատոր քաղաքական գործիչը ունի իր առանձնահատկությունները: Նախ և առաջ մանիպուլյատոր քաղաքական գործիչը միջանձնային մանիպուլյացիայի հնարքները ուղղում է իր շրջապատի և մոտ գաղափարակիցների վրա, իսկ խմբայինը՝ հանրության:

Քաղաքական գործչի և իր շրջապատի հարաբերությունները պայմանավորված են ոչ միայն հենց առաջնորդի հոգեբանական առանձնահատկություններով, այլ նաև քաղաքական համակարգի առանձնահատկություններով՝ նրա թափանցիկության աստիճանով, քաղաքական մշակույթի մակարդակով ու հասարակության ժողովրդավարացման չափով և, վերջապես, գրված ու չգրված բարոյագիտական օրենքներով և կանոններով:

Այսպիսով, քաղաքական մանիպուլյացիաները իրենցից ներկայացնում են և՛ միջանձնային, և՛ խմբային մանիպուլյացիաներ: Առաջին դեպքում մանիպուլյատորը դիմում է մանիպուլյացիոն հնարքներին՝ տեխնիկաներին, որոնք աշխատում են միջանձնային մակարդակում, իսկ երկրորդ դեպքում մանիպուլյատորը օգտվում է մանիպուլյացիոն տեխնոլոգիաներից:

Քաղաքական մանիպուլյացիայի հիմքում ևս ընկած են հոգեբանական պատճառներ թե՛ մանիպուլյատորի, թե՛ դրա զոհերի վարքում: Մանիպուլյացիայի նկատմամբ հակվածությունը բնորոշ է այսպես կոչված նեվրոտիկ անձանց, որոնց գլխավոր պահանջմունքներն են հանդիսանում դոմինանտելու և իշխանության պահանջմունքները [**5**]:

Նախ և առաջ պետք է նշել, որ մանիպուլյացիան դժվար պատժելի է: Մանիպուլյատորը, ըստ իր կարծիքի, երբեք չունի վատ նպատակներ, և սա է հանդիսանում այս երևույթի դեմ պայքարի դժվարությունը:

Մանիպուլյացիաների հոգեբանական էությունը մարդկային հույզերի շահագործման մեջ է: Եվ հենց հուզական ոլորտն է ընկած կրոնական և ազգային կոնֆլիկտների լուծման դժվարության հիմքում: Սակայն միշտ չէ, որ քաղաքական մանիպուլյացիան հանդես է գալիս այսպիսի գլոբալ ձևերով: Մենք նրա հետ առնչվում ենք ամեն օր՝ դիտելով հեռուստացույց, կարդալով թերթեր կամ լսելով ռադիո: Քաղաքական գործիչները և լրագրողները, գիտնականները և դերասանները, գրողները և քաղաշխատողները, ինֆորմացիայի սպառողները՝ բոլորը, հանդիսանում են քաղաքական մեծ խաղի խաղաքարտեր:

Միջանձնային մանիպուլյացիաների տեխնիկան կարող է լինել ամենատարբեր ձևերի՝ կախված մանիպուլյատորի երևակայությունից, իմացության չափից և հնարքներից, որոնց նա տիրապետում է: Մանիպուլյատորի ցանկացած զոհ ի վերջո վերածվում է յուրատեսակ «զոմբի»-ի: Նա դադարում է պատկանել ինքն իրեն, կորցնում է ինքնապահպանման զգացումը, նրա էներգիան կարող է ուղղվել ցանկացած կողմ՝ նույնիսկ սպանության: Այսինքն՝ ցանկացած մանիպուլյատորի նպատակը այլ մարդուն կամ մարդկանց խմբին սեփական կամքին հնազանդեցնելն է: Իսկ

քաղաքական գործիչները հաճախ օգտագործում են իրենց ենթականերին ինչ-որ խնդիրների լուծման համար՝ քամելով նրանց ինչպես սպունգ, իսկ հետո ազատվում են նրանցից: Սրա տեխնոլոգիան շատ պարզ է. նախ և առաջ այս կամ այն քաղաշխատողը դառնում է «հատուկ մոտ կանգնած», օժտվում է լայն իրավասություններով, ստանում է «քարտբլանշ»: Իսկ երբ նրա կարիքը այլևս չի լինում, նրա վրա բարդվում են բոլոր սխալները և անհաջողությունները, նա դառնում է «քավության նոխազ», իսկ ղեկավարը ձեռք է բերում նոր ընտրյալ:

Մանիպուլյատորները մեծ նշանակություն են տալիս մանրուքներին: Լինելով շատ լավ հոգեբաններ՝ նրանք կարողանում են «կարդալ» իրենց ենթակաների մտքերը ժեստերի, հայացքի, ձայնի տեմբրի և այլ նշանների միջոցով, որոնք մատնում են մարդու տրամադրությունը և վերաբերմունքը տվյալ խոսակցության թեմայի նկատմամբ:

Խոսքային (վերբալ) աղբյուրը օգտագործվում է ինֆորմացիայի փոխանցման համար, իսկ ոչ վերբալ աղբյուրը օգտագործվում է միջանձնային հարաբերությունների քննարկման համար և երբեմն էլ փոխարինում է վերբալ փոխանցումներին:

Ժեստերը վերլուծելիս անհրաժեշտ է դրանք դիտարկել այն կոնտեքստի մեջ, որտեղ առաջանում են: Հակառակ դեպքում կարելի է հանգել սխալ եզրակացությունների:

Դիտարկենք առավել հաճախ հանդիպող և ուշադրության արժանի ժեստերը:

1. Ձեռքի ափի բացում. բաց ձեռքը համարվում է ազնվության և վստահության նշան:

2. Բռունցք. բռունցքը ցույց է տալիս խոսքի ագրեսիվությունը:

3. Դեմ դիմաց գտնվող երկու բռունցքներ. սա խոսում է ինչ-որ կողմերի միջև հակամարտություն ստեղծելու ցանկության մասին:

4. Բարձրացված ձեռք. սա խոսում է լսարանի նկատմամբ իշխելու, սեփական դերի՝ որպես առաջնորդի, հաստատման մասին:

Եվ, վերջապես, հարկ է շեշտել, որ հասարակական կարծիքի նկատմամբ մանիպուլյացիայի գլխավոր դերը պատկանում է ԶԼՄ-ներին, որոնք տալիս են տեղեկատվության և ապատեղեկատվության մեծ մասը, և որոնցից օգտվում ենք սոցիալ-քաղաքական գործունեության գնահատականի համար: Մեր վերաբերմունքը խնդիրներին և երևույթներին հիմնականում կանխորոշված է նրանց կողմից, ովքեր ղեկավարում են կոմունիկացիաների աշխարհը [**3**]:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Амелин В. Н.** Социология политики : Спецкурс – Москва : Издательство МГУ, 1992 . – 184 с.
2. **Доценко Е. Л.** Психология манипуляции: феномены, механизмы и защита. – М.: ЧеРо, Издательство МГУ, 1997. – 344 с.
3. Имеджилогогия – 2012: Драйвер развития // Материалы Девятого Международного симпоизиума по имиджелогии / Под ред. Е. А. Петровой. – М.: РИЦ АИМ, 2012. – 503 с.
4. **Кольев А.** Политическая мифология Реализация социального опыта: «Логос»; М.: 2003. – 384 с.
5. **Цуладзе М.** Политические манипуляции, или Покорение толпы М.: Книжный дом "Университет", 1999. – 144 с.

Сдана/Հանձնվել է՝ 25.04.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 28.04.2020
Принята/Ընդունվել է՝ 30.04.2020